ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018
02.2018
03.2018
04.2018
05.2018
06.2018
07.2018
08.2018
09.2018
Սեպտեմբեր
10.2018
11.2018
12.2018

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Սեպտեմբեր

թիվ 9 (241)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԻՆՎԵՆՏ ՍԵՐՎԻՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ գրավատնային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, «ՀՕՍ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ «Պրիվիլեգիա» մասնաճյուղը, «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ՈՒՎԿ ՓԲԸ «ՎԱՐԴԵՆԻՍ» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 ՍՊԸ-ի, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 1 ՍՊԸ-ի, 1 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 160Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 154-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական կերամիկա», «Ռուսական կերամիկա», «Հունական կերամիկա», «Իրանական կերամիկա», «Չինական կերամիկա» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 171-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 10/31-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 333-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 172-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

16 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԻՆՎԵՆՏ ՍԵՐՎԻՍ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 155Ա):
- ***Գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ՀՕՍ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 156Ա):
- ***Գրանցվել է*** «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Պրիվիլեգիա» մասնաճյուղը (որոշում թիվ 1/622Ա):
- ***Գրանցվել է*** «ՎԱՐԿՍ ԷՅ ԷՄ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «ՎԱՐԴԵՆԻՍ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/649Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 ՍՊԸ-ի, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք՝ 730000*** ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով (որոշումներ թիվ 1/606Ա, 1/619Ա), 1 ՍՊԸ-ի,1 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում՝*** հետագայում նման խախտումներ թույլ չտալու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/606Ա, 1/619Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2018 թ. սեպտեմբերի 25-ի թիվ 160Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական կերամիկա», «Ռուսական կերամիկա», «Հունական կերամիկա», «Իրանական կերամիկա», «Չինական կերամիկա» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը և 40-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2018 թվականի հոկտեմբերի 18-ից շրջանառության մեջ դնել «Հայկական կերամիկա», «Ռուսական կերամիկա», «Հունական կերամիկա», «Իրանական կերամիկա», «Չինական կերամիկա» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
19 սեպտեմբերի 2018 թ., N 154-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի սեպտեմբերի 17-ի
թիվ 154-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Հայկական կերամիկա» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և ազգային զարդանախշեր: Ստորին մասի կենտրոնում նշված է անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», իսկ վերին աջ հատվածում՝ թողարկման տարեթիվը՝ «2018»: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Աշխարհի կերամիկան», «Pottery of the World», «Republic of Armenia»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Քյոթահիայի հայկական կերամիկայի նմուշներից. կավե խնկաման (XVIII դարի առաջին կես)՝ հայկական զարդանախշի համապատկերին: Մակագրություններն են՝ «Հայկական կերամիկա» և «Armenian Pottery»:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. սեպտեմբերի 17-ին (ՀՀԳՏ N 26(629), 15.10.2018):


Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	40 x 40 մմ
Քաշը	31,1 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	մինչև 2000 հատ

Էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Հայկական կերամիկա արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Ռուսական կերամիկա» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և ազգային զարդանախշեր: Ստորին մասի կենտրոնում նշված է անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», իսկ վերին աջ հատվածում՝ թողարկման տարեթիվը՝ «2018»: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Աշխարհի կերամիկան», «Pottery of the World», «Republic of Armenia»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է ռուսական ճենապակու նմուշներից. շշի սառեցման ոսկեզօծ անոթը (XIX դարի սկիզբ)՝ ռուսական զարդանախշի համապատկերին: Մակագրություններն են՝ «Ռուսական կերամիկա» և «Russian Pottery»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	40 x 40 մմ
Քաշը	31,1 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	մինչև 1500 հատ

Էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Ռուսական կերամիկա» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Հունական կերամիկա» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և ազգային զարդանախշեր: Ստորին մասի կենտրոնում նշված է անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», իսկ վերին աջ հատվածում՝ թողարկման տարեթիվը՝ «2018»: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Աշխարհի կերամիկան», «Pottery of the World», «Republic of Armenia»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է հին հունական կերամիկայի նմուշներից. կավե սկիֆոս (Ք.ա. VI դար)՝ հունական զարդանախշի համապատկերին: Մակագրություններն են՝ «Հունական կերամիկա» և «Greek Pottery»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	40 x 40 մմ
Քաշը	31,1 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	մինչև 1500 հատ

էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Հունական կերամիկա» արծաթե հուշադրամի
դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Իրանական կերամիկա» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և ազգային զարդանախշեր: Ստորին մասի կենտրոնում նշված է անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», իսկ վերին աջ հատվածում՝ թողարկման տարեթիվը՝ «2018»: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Աշխարհի կերամիկան», «Pottery of the World», «Republic of Armenia»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է իրանական կերամիկայի նմուշներից. ճենապակյա սալիկ (XIII դարի կես)՝ իրանական զարդանախշի համապատկերին: Մակագրություններն են՝ «Իրանական կերամիկա» և «Iranian Pottery»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	40 x 40 մմ
Քաշը	31,1 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	մինչև 1500 հատ

էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Իրանական կերամիկա» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Չինական կերամիկա» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են ՀՀ զինանշանը և ազգային զարդանախշեր: Ստորին մասի կենտրոնում նշված է անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», իսկ վերին աջ հատվածում՝ թողարկման տարեթիվը՝ «2018»: Մակագրություններն են՝ «Հայաստանի Հանրապետություն», «Աշխարհի կերամիկան», «Pottery of the World», «Republic of Armenia»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է չինական ճենապակու նմուշներից. ափսե (XIII դարի կես)՝ չինական զարդանախշի համապատկերին: Մակագրություններն են՝ «Չինական կերամիկա» և «Chinese Pottery»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Չափը	40 x 40 մմ
Քաշը	31,1 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	մինչև 1500 հատ

էսքիզների հեղինակն է Հարություն Սամուելյանը:
Հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

«Չինական կերամիկա» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*«Ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 10/31-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 333-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով պաշտպանել ներդրումային ֆոնդերի ներդրողների շահերը՝ նվազեցնելով ներդրումային ֆոնդերի պահառուական գործառույթներում առկա էական ռիսկերը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, 88-րդ հոդվածի 3-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի պահառուի կառուցվածքի և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները» Կանոնակարգ 10/31-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ընդհանուր կանոնները սահմանելու մասին» թիվ 333-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում ներդրումային ֆոնդերը (ֆոնդերի կառավարիչները) և ֆոնդերի պահառուները պարտավոր են համապատասխանեցնել իրենց գործունեությունը սույն որոշմանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
2 հոկտեմբերի 2018 թ., N 171-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. սեպտեմբերի 28-ին (ՀՀՊՏ N 26 (629), 15.10.2018):

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 171-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/31

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ֆոնդի (այսուհետ նաև՝ ֆոնդ) պահառուի կառուցվածքի և գործունեության նկատմամբ լրացուցիչ պահանջները, այդ թվում՝ տարբեր տեսակի ակտիվների պահառության և պահառուի կողմից ակտիվների տարանջատման սկզբունքները:
2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում սահմանված նշանակությունները:

ԳԼՈՒԽ 2. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3. Ֆոնդի ակտիվները պահառության են հանձնվում պահառուին հետևյալ սկզբունքներին համապատասխան.
1) արժեթղթերը և ածանցյալ ֆինանսական գործիքները ի պահ են հանձնվում պահառուին, եթե դրանք կարող են գրանցվել (հաշվառվել) պահառուի մոտ բացված համապատասխան հաշիվներում.
2) սույն կետի 1-ին ենթակետում չներառված ակտիվների համար պահառուն պետք է ստուգի և հավաստիանա, որ դրանց նկատմամբ վերջնական սեփականության իրավունքը պատկանում է ֆոնդին և պետք է վարի գրառումներ այդ ակտիվների վերաբերյալ (որոնց նկատմամբ ֆոնդի սեփականության իրավունքը հաստատված է): Սույն ենթակետով նախատեսված սեփականության իրավունքը ստուգվում է ֆոնդի կառավարչի կողմից ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության և, հնարավորության դեպքում, արտաքին (երրորդ անձանցից ստացված) ապացույցների հիման վրա:
4. Սույն կանոնակարգի իմաստով՝ պահառուին ի պահ հանձնված են համարվում նաև ֆոնդի ակտիվներում ներառված այն արժեթղթերը, որոնք գրանցված (հաշվառված) են կամ կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն գրանցվել (հաշվառվել) պահառուի (ենթապահառուի) անունով բացված արժեթղթերի հաշվում: Սույն կանոնակարգի 3-րդ կետի 1-ին ենթակետը չի տարածվում այն արժեթղթերի և ֆինանսական գործիքների վրա, որոնք, ըստ կիրառվող օրենսդրության, ենթակա են գրանցման (հաշվառման) թողարկողի կամ դրա ռեեստրավարի կողմից ուղղակիորեն տվյալ ֆոնդի (ֆոնդի կառավարչի) անունով:
5. Պահառուն պարտավոր է՝
1) վարել առանձնացված հաշվառում սույն կանոնակարգի համաձայն ի պահ ընդունված ակտիվների, դրանց հետ իրականացվող գործառնությունների և գրառումների վերաբերյալ (ներառյալ՝ առանձին հաշիվներ յուրաքանչյուր ֆոնդի համար), որը թույլ կտա ցանկացած ժամանակ տարանջատել յուրաքանչյուր ֆոնդի (ենթաֆոնդի) համապատասխան ակտիվները պահառուի սեփական, այլ ֆոնդերի (ենթաֆոնդերի) կամ անձանց ակտիվներից,
2) պահպանել տեղեկատվությունը և վարել հաշվառումն ու հաշիվներն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունը ֆոնդի ակտիվներին,
3) պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և այլ անձանց մոտ առկա՝ ֆոնդի ակտիվների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև,
4) ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ ֆոնդի ակտիվների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում ֆոնդի ակտիվների կամ դրանց հետ կապված իրավունքների կորստի ռիսկը նվազագույնի հասցնելու համար,

5) պահառության գործառույթների պատվիրակման դեպքում գնահատել ակտիվների պահառության ողջ շղթայում (ենթապահառուներ) առկա ռիսկերը, մշտապես հետևել դրանց և էական ռիսկերի մասին տեղեկացնել ֆոնդի կառավարչին:

6. Պահառուն պարտավոր է ապահովել սույն կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրառումների և տեղեկատվության թարմությունը՝ իր կանոններով և(կամ) պահառության պայմանագրով սահմանված կարգով:

7. Պահառուն պետք է ունենա հասանելիություն ցանկացած տեղեկատվության, որն անհրաժեշտ է սույն կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սեփականության իրավունքի ստուգման և հաշվառման պարտականությունների կատարման համար: Ֆոնդի կառավարիչը պետք է պահառուին տրամադրի, ինչպես նաև ապահովի, որ երրորդ անձինք պահառուին տրամադրեն այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է պահառուի՝ սույն կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սեփականության իրավունքի ստուգման և հաշվառման պարտականությունների կատարման համար:

8. Պահառուն պետք է ձեռնարկի բավարար կազմակերպական միջոցներ և (կամ) ներդնի անհրաժեշտ ընթացակարգեր սույն կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ակտիվների՝ առանց պահառուի իմացության օտարման, փոխանակման կամ փոխանցման ռիսկը առավելագույնս նվազեցնելու համար: Պահառուն պետք է հասանելիություն ունենա այդ ակտիվներով յուրաքանչյուր գործառնության վերաբերյալ փաստաթղթերին և տեղեկատվությանը: Ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի, որ համապատասխան երրորդ անձինք պահառուին տրամադրեն հավաստագրեր կամ այլ փաստաթղթային ապացույցներ սույն կետում նշված ակտիվների օտարման կամ ձեռքբերման դեպքում:

9. Ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի, որ ֆոնդի ակտիվների հետ կապված բոլոր հանձնարարականները և տեղեկատվությունը ուղարկվում են ֆոնդի պահառուին, որպեսզի պահառուն հնարավորություն ունենա իրականացնելու ինքնուրույն ստուգումներ և (կամ) համեմատություններ:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՀԱՌՈՒԻ ՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ից 5-րդ կետերով նախատեսված հսկողական գործառույթների շրջանակում ֆոնդի պահառուն պարտավոր է՝

1) ներդնել տվյալ ֆոնդի բնույթի, ներդրումային քաղաքականության, ֆոնդի կառավարչի կազմակերպական կառուցվածքի հետ կապված ռիսկերին համապատասխան հսկողական ընթացակարգեր.
2) իրականացնել ֆոնդի կառավարչի (կամ նշանակված այլ անձի) պատասխանատվության ներքո գտնվող համապատասխան ընթացակարգերի ստուգումներ.
3) պարբերաբար իրականացնել ստուգումներ և համեմատություններ իր, ֆոնդի կառավարչի և այլ անձանց մոտ առկա՝ ֆոնդի ակտիվների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև.
4) սահմանել հսկողական գործառույթների իրականացման ընթացքում ի հայտ եկած անճշտությունների կամ խախտումների դեպքում պահառուի կողմից իրականացվելիք գործողությունները:

11. Ֆոնդի կառավարիչը պետք է պահառուին տրամադրի այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է պահառուին սույն կանոնակարգի 10-րդ կետով նախատեսված գործառույթներն ու պարտականություններն իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՆԴԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

12. Ֆոնդի դրամական միջոցները կարող են պահվել մեկ կամ մի քանի բանկերում կամ պահառուի մոտ բացված դրամական հաշիվներում: Եթե ֆոնդի դրամական միջոցների հաշիվը բացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկում ֆոնդի կառավարչի կամ պահառուի անունով, ապա այն պետք է լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.4-րդ հոդվածով նախատեսված անվանատիրոջ հաշիվ:

13. Ֆոնդի կառավարիչը պետք է պահառուին տեղեկացնի ֆոնդի անունով կամ ֆոնդի համար բացված բոլոր դրամական հաշիվների վերաբերյալ՝ պահառուի նշանակման պահին, ինչպես նաև ֆոնդի նոր դրամական հաշվի բացման դեպքում:

14. Պահառուն պետք է իրականացնի հսկողություն ֆոնդի դրամական հոսքերի նկատմամբ: Այդ նպատակով պահառուն պետք է իրականացնի առնվազն հետևյալը՝

1) ներդնի ֆոնդի բոլոր դրամական հոսքերի ուսումնասիրությունների և համեմատությունների արդյունավետ ընթացակարգեր և իրականացնի դրանք օրական կտրվածքով, իսկ ոչ հաճախակի հոսքերի դեպքում՝ յուրաքանչյուր հոսքի դեպքում.
2) ներդնի ընթացակարգեր, որոնք թույլ կտան բացահայտել կասկածելի դրամական հոսքերը կամ այն հոսքերը, որոնք կարող են չհամապատասխանել ֆոնդի գործունեությանը կամ ֆոնդի կանոններին.
3) պարբերաբար (տարեկան առնվազն մեկ անգամ) վերանայի սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված ընթացակարգերի համարժեքությունը.
4) ստուգի ֆոնդի դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ իր և ֆոնդի կառավարչի գրառումների համապատասխանությունը:

15. Ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի, որ պահառուին տրամադրվի ֆոնդի յուրաքանչյուր դրամական հաշվի վերաբերյալ այն ողջ տեղեկատվությունը (ներառյալ՝ հանձնարարականները), որն անհրաժեշտ է պահառուին ֆոնդի դրամական հոսքերի նկատմամբ հսկողություն իրականացնելու, այդ թվում՝ ինքնուրույն ստուգումներ և(կամ) համեմատություններ իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՀԱՌՈՒԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

16. Պահառուն ֆոնդի ակտիվների վերաբերյալ հաշվառումը պետք է իրականացնի այնպես, որ այն թույլ տա ցանկացած պահի ունենալու ֆոնդի ակտիվների կազմի և քանակի (ծավալի, անվանական արժեքի) մասին ամբողջական տեղեկատվություն: Պահառուն սույն կետով նշված տեղեկատվությունը պայմանագրով սահմանված կարգով և պարբերականությամբ տրամադրում է ֆոնդին (ֆոնդի կառավարչին):

17. Պահառուն ֆոնդի ակտիվների և դրանցով գործարքների մասով գրանցումները պետք է վարի այնպիսի եղանակով, որ բավարարվեն հետևյալ պայմանները.
1) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) պահանջով այդ գրանցումները պետք է հասանելի դարձվեն Կենտրոնական բանկի համար, և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլը,
2) եթե այդ գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որ հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը, և
3) պետք է բացառվի երրորդ անձանց համար այդ գրանցումների չթույլատրված հասանելիությունը:

18. Պահառուն, սույն կանոնակարգին համապատասխան, ֆոնդի ակտիվների միասնական հաշվառումն իրականացնում է էլեկտրոնային եղանակով:

19. Պահառուի փոփոխության դեպքում պահառուն պետք է ապահովի ֆոնդի ակտիվների վերաբերյալ իր մոտ առկա ողջ տեղեկատվության անխափան փոխանցումը նոր պահառուին:

20. Ֆոնդի ակտիվների վերաբերյալ պահառուի մոտ գրանցված տեղեկությունները պահպանվում են պահառուի կողմից տվյալ ֆոնդի ակտիվների պահառության իրականացման ողջ ընթացքում և դրանից հետո առնվազն յոթ տարի:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

21. Պահառուն պետք է ապահովի ֆոնդի պահառության գործառույթների ֆունկցիոնալ և կազմակերպական առանձնացվածությունը ֆոնդին կամ ֆոնդի կառավարչին մատուցվող այլ ծառայություններից և ապահովի, որ բոլոր հնարավոր շահերի բախումները բացահայտվում, կառավարվում և հսկվում են:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Պահառության պայմանագիրը պետք է պարունակի առնվազն՝
1) պահառուի կողմից մատուցվող ծառայությունները, ֆոնդերի ակտիվների պահառության գործառույթների նկարագիրը (ներառյալ՝ հաշիվներում հաշվառման, սեփականության ստուգման և հաշվառման, հսկողական)՝ ըստ ակտիվների տեսակների և ֆոնդի ներդրումների աշխարհագրության,
2) ֆոնդի ակտիվներով գործառնությունների գրանցման կարգը,
3) պահառուի՝ օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված գործառույթներն ու պարտականություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունները և դրանց ստացման (փոխանակման) կարգը, ներառյալ երրորդ անձանցից պահառուին տեղեկությունների տրամադրումն ապահովող ընթացակարգերը,

4) պահառուի կողմից ֆոնդի կառավարչին տրամադրվող տեղեկությունները և դրանց տրամադրման կարգը, որն անհրաժեշտ է կառավարչին ֆոնդի հետ կապված իր պարտականությունների կատարման համար,
5) պահառուի գործառույթների պատվիրակման կարգը,
6) պահառության պայմանագրի ժամկետը, դադարման հիմքերը և կարգը, պահառության պայմանագրի դադարման դեպքում նոր պահառուին տեղեկությունների փոխանցման կարգը,
7) անճշտությունների կամ խախտումների դեպքում ֆոնդի կառավարչին կամ Կենտրոնական բանկին տեղեկացման կարգը:

23. Եթե սույն կանոնակարգի 22-րդ կետով նախատեսված դրույթները սահմանված են պահառուի պահառության կանոններով, ապա դրանք պահառության պայմանագրում կարող են սահմանվել այդ կանոններին հղումների տեսքով:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 115-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) վաճառքի գործընթացում ներդրողների շահերի պաշտպանությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ե» ենթակետը և 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը հաստատելու մասին» թիվ 115-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ը 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ կետով.

«7.1. Ֆոնդի կառավարչի կազմում ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) վաճառքն իրականացնող ֆիզիկական անձը պետք է ունենա բավարար գիտելիքներ՝ ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) վաճառքն իրականացնելու, այդ թվում՝ ներդրողներին անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը տրամադրելու համար: Սույն կետում նշված անձանց գիտելիքների ստուգման (որակավորման) կարգը և (կամ) մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանվում են ֆոնդի կառավարչի գործունեության կանոններով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 6 ամսվա ընթացքում ներդրումային ֆոնդերի կառավարիչները պարտավոր են իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն որոշմանը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
2 հոկտեմբերի 2018 թ., N 172-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. սեպտեմբերի 28-ին (ՀՀՊՏ N 26 (629), 15.10.2018):

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու թ յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 20

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 23

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 28

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 29

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 39

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 60
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 70
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 72
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 80
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2018 թ. օգոստոս*	*2018 թ. օգոստոսի իրական աճի փոփոխությունը 2017 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2018 թ. սեպտեմբեր*	*2018 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2017 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		0.6		-0.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	144332.1	5.4	145875.5	0.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	101404.4	-16.7	130420.1	-17.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	40802.7	1.6	42370.0	3.5
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	262743.7	14.9	269975.1	8.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	158811.6	20.5	164984.2	17.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	660.7	4.4	588.0	-5.5
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	173960[1]	2.3[2]	172568[3]	1.6[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2018 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.8 [1]	1.2	-3.5	2.9
Փետրվար	-0.5	-1.6	1.9	0.0
Մարտ	0.1	-1.7	-5.7	-0.1
Ապրիլ	-0.3	-1.2	0.4	-3.2
Մայիս	-1.0	-1.3	0.4	-14.7
Հունիս	-1.6	2.4	0.1	-3.8
Հուլիս	-1.2	-1.5	0.4	-22.9
Օգոստոս	0.6	-1.2	-0.2	-6.5
Սեպտեմբեր	0.3	0.2	-0.8	-15.1
2018 թ. հունվար – սեպտեմբերը 2017 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ	2.6	2.3	-0.6	15.2

ԳՆԱՃ

ժամանակաշրջան	2016	2017	2018 [7]
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.2	2.6	2.8 [1]
Փետրվար	-1.4	-0.9	-0.5
Մարտ	-0.3	-0.3	0.1
Ապրիլ	-0.3	1.0	-0.3
Մայիս	-0.7	-0.2	-1.0
Հունիս	-0.5	-0.9	-1.6
Հուլիս	-2.3	-2.6	-1.2
Օգոստոս	-0.5	-0.4	0.6
Սեպտեմբեր	0.1	0.2	0.3
Հոկտեմբեր	0.5	0.8	
Նոյեմբեր	1.0	2.0	
Դեկտեմբեր	1.1	1.5	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-0.4	-0.6	2.9 [1]
Փետրվար	-1.7	-0.2	3.3
Մարտ	-2.0	-0.1	3.7
Ապրիլ	-1.9	1.2	2.4
Մայիս	-2.1	1.6	1.6
Հունիս	-1.1	1.1	0.9
Հուլիս	-1.3	0.9	2.3
Օգոստոս	-1.9	0.9	3.3
Սեպտեմբեր	-1.9	1.0	3.5
Հոկտեմբեր	-0.9	1.2	
Նոյեմբեր	-0.6	2.2	
Դեկտեմբեր	-1.1	2.6	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	2018 թ. սեպտեմբերը 2017 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**3.5**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	5.3	2.2
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	5.0	0.2
Հագուստ և կոշիկ	0.4	0.0
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.1	0.0
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	1.1	0.0
Առողջապահություն	4.5	0.4
Տրանսպորտ	5.9	0.5
Կապ	-0.6	0.0
Հանգիստ և մշակույթ	0.6	0.0
Կրթություն	2.4	0.0
Ռեստորաններ և հյուրանոցներ	5.1	0.1
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	-0.1	0.0

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2016	2017	2018[7]
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.02[2]	-0.01[2]	0.30[2]
Փետրվար	-0.09	-0.04	0.23
Մարտ	-0.11	0.25	0.09
Ապրիլ	-0.11	0.38	-0.08
Մայիս	-0.18	0.22	-0.20
Հունիս	-0.39	-0.02	-0.34
Հուլիս	-0.27	-0.10	-0.34
Օգոստոս	-0.02	0.35	0.27
Սեպտեմբեր	0.11	0.39	0.77
Հոկտեմբեր	0.38	0.83	
Նոյեմբեր	0.02	0.73	
Դեկտեմբեր	-0.20	0.27	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	-1.05[2]	-1.61[2]	4.33[2]
Փետրվար	-1.39	-1.24	4.57
Մարտ	-1.47	-0.86	4.30
Ապրիլ	-1.31	-0.30	3.74
Մայիս	-1.35	0.26	3.24
Հունիս	-1.45	0.68	2.84
Հուլիս	-1.23	0.89	2.52
Օգոստոս	-1.10	1.35	2.36
Սեպտեմբեր	-1.12	1.63	2.65
Հոկտեմբեր	-1.06	1.91	
Նոյեմբեր	-0.92	2.78	
Դեկտեմբեր	-0.97	3.31	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
2018 թ. սեպտեմբերը 2017 թ. սեպտեմբերի նկատմամբ, %	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**2.65**
Տավարի և հորթի միս	1.41
Կարագ սերուցքային	0.16
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	0.14
Բենզին	0.14
Պանիր	0.12
Պանիր (տնական)	0.10
Հավի ձու	0.08
Սրտանոթային դեղամիջոցներ	0.08
Թառափ	0.06
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	0.05
«Արագ սննդի» կետերում, կրպակներում, առևտրային սայլակներից, ավտոմատների միջոցով իրացվող պատրաստի սնունդ	0.05
Բուսական յուղ (արևածաղկի)	0.05
Հավի միս	-0.05
Հնդկացորեն	-0.08
Շաքարավազ	-0.16

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:
[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվաճում	2018 թ. հունվար – օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)	2018 թ. հունվար – օգոստոսը 2017 թ. հունվար – օգոստոսի նկատմամբ (%)	2018 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2018 թ. հունվար – սեպտեմբերը 2017 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	1586.8	116.5	1774.1	111.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	3165.4	132.0	3581.6	128.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1578.6	152.4	1807.5	151.2

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2017 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	102800	33607	69193	744822	266083	478739
ԱՄՆ	14798	14839	-41	128183	110917	17266
Ուկրաինա	813	2147	-1334	6329	9806	-3476
Ղազախստան	2329	156	2173	29634	1958	27676
Գերմանիա	3032	4469	-1436	28316	21588	6728
Իսպանիա	632	1870	-1237	7258	15448	-8189
Ֆրանսիա	2180	1347	833	17895	11142	6753
ԱՄԷ	1281	2098	-817	19107	15603	3504
Չինաստան	408	7047	-6639	3197	47267	-44070
Թուրքիա	121	799	-678	963	6815	-5852
Այլ երկրներ	31957	21203	10754	249037	165059	83978
Ընդամենը	**160351**	**89581**	**70770**	**1234742**	**671686**	**563056**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2018 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	94650	48730	45920	769840	325994	443845
ԱՄՆ	19142	13799	5344	154894	136556	18338
Ուկրաինա	805	1063	-258	7133	10854	-3721
Ղազախստան	2824	202	2622	23348	2467	20881
Գերմանիա	2749	2919	-170	31196	35390	-4194
Իսպանիա	725	1675	-950	8954	11517	-2564
Ֆրանսիա	2546	939	1606	37779	10669	27110
ԱՄԷ	2937	2190	747	17048	17939	-891
Չինաստան	617	5483	-4866	2990	41431	-38441
Թուրքիա	103	949	-846	1636	7351	-5716
Այլ երկրներ	24585	21017	3567	224305	229408	-5103
Ընդամենը	**151682**	**98965**	**52717**	**1279123**	**829578**	**449546**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2017 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	49167	16071	33096	358785	128382	230403
ԱՄՆ	7077	7097	-21	61846	53561	8284
Ուկրաինա	389	1027	-638	3051	4726	-1675
Ղազախստան	1114	75	1039	14281	946	13334
Գերմանիա	1450	2137	-687	13657	10408	3249
Իսպանիա	302	894	-592	3503	7445	-3942
Ֆրանսիա	1043	644	398	8635	5372	3263
ԱՄԷ	613	1003	-390	9196	7521	1675
Չինաստան	195	3370	-3175	1541	22775	-21233
Թուրքիա	58	382	-324	464	3287	-2822
Այլ երկրներ	15290	10140	5150	120129	79563	40566
Ընդամենը	**76696**	**42840**	**33857**	**595089**	**323986**	**271103**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2018 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար – սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	45805	23570	22235	371451	157179	214273
ԱՄՆ	9261	6674	2587	74702	65851	8851
Ուկրաինա	389	514	-125	3439	5231	-1792
Ղազախստան	1366	98	1268	11257	1189	10068
Գերմանիա	1330	1411	-81	15047	17069	-2022
Իսպանիա	351	810	-459	4318	5552	-1234
Ֆրանսիա	1231	455	776	18176	5143	13033
ԱՄԷ	1422	1059	363	8221	8648	-427
Չինաստան	298	2651	-2353	1442	19981	-18539
Թուրքիա	50	459	-409	789	3546	-2757
Այլ երկրներ	11892	10167	1725	108151	110593	-2442
Ընդամենը	**73395**	**47868**	**25527**	**616992**	**399982**	**217010**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՓԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2017	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.1	139.6	138.3	137.6	136.2	134.2	131.4	129.3	128.0	129.5	132.0	133.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	271.5	268.5	268.1	265.4	263.8	263.0	263.9	261.0	259.0	261.0	261.8	262.0

2018	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	134.7	132.3	132.2	133.6	134.7	133.8	133.5	138.5	139.2			
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	257.5	255.3	255.9	260.6	266.6	270.3	273.4	281.4	283.4			


[1] 2014 թ. մայիսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ փոփոխվել է գործընկեր երկրների սպառողական գների ինդեքսի բազիսային տարին՝ 2010=100 (նախկինում՝ 2005=100):
[2] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[4] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2017	2018								
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [4]
Համախառն միջազգային պահուստներ	**2314.1**	**2286.9**	**2279.2**	**2234.1**	**2039.3**	**2007.8**	**1992.1**	**2055.0**	**2069.6**	**2149.3**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	7.2	1.9	0.6	0.6	9.2	7.0	5.5	4.5	3.0	1.6
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2306.9	2284.9	2278.6	2233.6	2030.1	2000.8	1986.6	2050.5	2066.6	2147.7

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2017	2018								
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**730.7**	**744.6**	**739.8**	**743.1**	**737.8**	**724.4**	**696.2**	**703.7**	**706.0**	**705.0**
ԱՄՀ վարկ	294.2	301.0	299.4	300.3	298.6	291.2	273.3	273.4	272.4	271.4
ՀՓԻ տեղաբաշխում	125.5	128.3	127.8	128.1	127.3	124.5	123.8	123.8	123.5	123.6
Այլ վարկեր	309.1	314.0	311.9	313.7	311.0	307.9	298.3	305.8	309.4	309.2
Այլ պարտավորություններ	1.9	1.3	0.7	1.0	0.9	0.8	0.8	0.9	0.7	0.9

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ կենտրոնական բանկի
	վերջնատոտալ ցուցանիշ	ընդամենը	իսկական ժամկետային վերջնվճարով արժեթղթեր	ժամկետային վերջնվճարով արժեթղթեր	իսկական վերջնվճարի վարկեր	ժամկետային վերջնվճարի վարկեր	ընդամենը	
2017								
Դեկտեմբեր [1]	17521	17521	160536	556	0	686	161778	**-144257**
2018								
Հունվար	17790	17790	219943	499	0	682	221125	**-203334**
Փետրվար	13549	13549	190378	509	0	682	191568	**-178019**
Մարտ	13650	13650	178424	590	0	681	179694	**-166045**
Ապրիլ	13736	13736	219768	563	0	685	221016	**-207279**
Մայիս	13570	13570	156141	465	0	684	157290	**-143720**
Հունիս	13548	13548	167802	591	0	684	169078	**-155529**
Հուլիս	13847	13847	179485	511	0	682	180678	**-166831**
Օգոստոս	13650	13650	190140	550	0	685	191376	**-177726**
Սեպտեմբեր	13660	13660	174011	566	0	685	175261	**-161601**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

